Քաղվածք արձանագրությունից

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի

Գնահատող հանձնաժողովի նիստի

2024թ. հուլիսի 31՝ ժամը 15:00-ին առցանց տարբերակով տեղի ունեցավ Գնահատող հանձնաժողովի նիստ, որին մասնակցում էին հանձնաժողովի անդամներից յոթը: Քվորումն ապահովված էր:

2024թ. մայիսի 24-ին անցկացված փակ նախապատրաստական նիստի ընթացքում Գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել Առաջարկի հրավերի հաստատման նախնական ժամկետ սահմանել օգոստոսի 1-2-ը: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի եվ նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման մասին Կառավորության 2346-Ա որոշման Հավելված 3.3-ի (Որակավորման պահանջներ) 7.5.1 կետը՝ Առաջարկի հրավերը պետք է հրապարակվի նախապատրաստական նիստից հետո ոչ ուշ, քան 55-րդ աշխատանքային օրը:

Գնահատող հանձնաժողովի գումարած նիստի ընթացքում քվեարկության դրվեց Առաջարկի հրավերի հաստատումը հետաձգելու հարցը: Նիստին մասնակից բոլոր անդամները կողմ քվեարկեցին:

Որոշվեց Առաջարկի հրավերը հրապարակել օգոստոսի 12-ին:

Նելլի Դավթյան
Գնահատող հանձնաժողովի
քարտուղար